երիտասարդներ «ազատ չարէք», «մակարներ» և այլ անուններով, որոնք հարսանիքի ամբողջ միջոցին միշտ փեսայի շուրջն են խմբուած լինում ու հարսանիքի գոյն տուողներն են։ Նմանապէս և հարսը շրջապատուած է լինում իւրայիններով՝ երկսեռ երիտասարդներով՝ «հարսնեղբայրներ, հարսնքոյրներ» և այլ անուններով անձինք, որոնք մինչև որ հարսը մտնի փեսայի տունը, իրաւունք են համարում պահպանել աղջիկը «չարից»։ «Մակարները», «ազատները» և ընդհանրապէս փեսայի ընկերակիցները հարսանիքի ժամանակ, մանաւանդ երբ գնում են հարսը բերելու հօր տանից, միշտ զինուած են լինում հրացաններով կամ ատրճանակներով. իսկ եթէ աղջիկը մի ուրիշ գիւղ է գնում, նոյն իսկ ձիաւորուած ու սպառազինուած են գնում։

Դարալագեազում, «երբ մօտենում են հարսի գիւղին՝ հարսնքաւորները աշխատում են փայլել արտաքինով։ Զուռնայի նուագածութեամբ նոքա շատ արագ արշաւում են ձիանց վրայ, ճարպիկ շարժումներ են անում, հրացաններ են արձակում, մի խօսքով՝ աշխատում են գիւղի ուշադրութիւնն իրենց վրայ դարձնել։ Սոքա արագութեամբ մօտենում են գիւղին և նորից ձիու գլուխը թեքում և նոյն արագութեամբ յետ արշաւում դէպի զուռնաչիները, որոնք միւս հանդիսականների յետևից կամաց առաջ են գալիս»[1]։ Այս նկարագրութիւնից՝ ազատների խումբը նմանում է սպառազէն հրոսակախմբի, որ գնում է, կարծես գիտակցելով իւր քաջութեան վրայ, հարուստ աւար առնելու։

Ղրիմու հայերի մէջ հարսնառների վերաբերմամբ կայ հարսանեաց մի երգ, ուր 'ի միջի այլոց ասում է.

«Թագաւորը կուքա թուրով
Հալխը շատ է, կառնու զօռով»[2])

[1]) Քաջերունի՝ Հայկական սովորութիւններ՝ «Ազգագրական Հանդէս» 1901 թ. VII և VIII գրք.

[2]) Նոյն՝ Ճանապարհորդական նկատողութիւններ—Դարալագեազ։ «Փորձ», 1881 թ. № IV

Հայ մատենագրության թուանշային գրադարան